

ւորները Ս. Ստեփանոսի դուռ կը կոչեն, անուն մը զոր ժԲ. և ժԳ. դարու ժամանակագիրները կու տային Նապոլուսի դրան կամ Պապ եղ Ամուսի: Ուխտաւորները այդպէս կը կոչեն այն դուռը, բայց տեղացիները կը կոչեն գայն Պապը Սիրքե Մարիամ, Ս. Կոյս Մարիամի դուռ: Ի հնումն այս դուռը կը կոչուէր Ոյխարաց դուռ. բայց այժմու դուռը շինուած է ժՁ. դարուն:

Ս. Ստեփանոսի դուռնէն 140 մեզր հեռու կը գտնուի Յովսափատի կամ Կեդրոնի Ջորը: Կեդրոնի Ջորը Երուսաղէմը կը բաժնէ Ջիթենեաց լեռնէն: Հաւանաբար ան Սաղէի կամ Թագաւորաց հովիտն է, ուր Մեկքիսեդեկ հանդիպեցաւ պատերազմէ յաղթական վերադարձող Աբրահամին, որ Տիրոջը ընծայեց հաց և գինի: Նոյն խորունկ ձորը Գ. դարէն Գ. դար Յովսափաս անունը առաւ, և ժողովրդային հաւատալիքը հոն կը տեղականացնէ Վերջին Դատաստանին տեսարանը:

Յովել մարգարէն կ'ըսէ (Գ. 2, 12) թէ Տէրը բուր ժողովուրդները Յովսափատի ձորը պիտի հաւաքէ դատելու համար անոնց բոլոր չարութիւնները: Ռաբրիական աւանդութեան համաձայն, այս ձորը գոյուլ թիւն չունի. Յովսափաս անունը խորհրդանշանական է, եւ կը նշանակէ Եհովան կը դաշ: Սակայն հրեաները, քրիստոնեաները և իսլամները այդ տեղ կը դնեն Կեդրոնը ուր Վերջին Դատաստանին Ատուած պիտի դատէ բոլոր մարդերը: Յիսուսի Համբարձումէն վերջ, հրեշտակներուն կողմէն աշակերտներուն ուղղեալ խօսքերը շատ զօրացուցին այն հաւատալիքը որուն համաձայն այս ձորին մէջ պիտի կատարուէր Վերջին Դատաստանը: «Արք Գալիլիացիք, զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս. այս Յիսուս՝ որ վերացաւն ի